

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изысканыхъ рисунковъ
— ПОЛНОМѢРНЫЕ —

ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКИАНА
ДУШКИНСКАЯ № 7.

291. 50—19 (5. 4.)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԷ՝ ԳՐԱԿԱՆ ՖՕՆԵՒ

Հետզհետէ պարզվում է այն հանգամանքը, որ հայկական տպագրութեան 400-ամեակի և գրերի գիւտի 1500-ամեակի տօնախմբութիւնը պէտք է կատարվի հոկտեմբերի 13-ին, այսինքն, որ հայ ժողովուրդը և ազգային կուլտուրական-դպրոցական-գիտական հաստատութիւնները թէ Ռուսաստան և թէ Թիւրքիա հակված են և շատերն նոյն իսկ որոշած են ընդունել էջմիածնի առաջարկը, այն է կատարել պատմական այդ երկու մեծ

դէպքերի տօնախմբութիւնը էջմիածնում, հոկտ. 13-ին.

Եւ, արդարեւ, եթէ արդէն վճռված հարց է համարվում, որ պէտք է անպատճառ այդ տօնախմբութիւնը կատարել այս 1912 թ., այն ժամանակ պէտք է խելացի և գործնական համարել հոկտ. 13-ին տօնելու առաջարկը, այն ևս էջմիածնում: Նախ, որովհետեւ, հոկտ. 13-ին հայոց եկեղեցին տօնում է Թարգմանիչների յիշատակը, իսկ յայտնի է, թէ հայկական գրերի գիւտի և հայոց գրականութեան ծաւալման գործում ինչ հսկայական դեր են կատարել Սահակը և Մեսրոպը, մեր երկու նշանաւոր Թարգմանիչները իրանց ընկերների՝ միւս Թարգմանիչների հետ: Երկրորդ, էջմիածնին շատ մօտ է գտնվում, այն է Օշական գիւղում, Մեսրոպի դամբարանը, որի այցելութիւնը աւելի քան պատշաճ է հայկական գրերի գիւտի տօնակատարութեան օրը:

Նոյեմբերի 26-ին տօնելու առաջարկը, որ արել է Թիֆլիսում հաստատված մի մասնաւոր յանձնաժողով, ոչ մի կրիտիկայի չէ դիմանում: Եթէ այդ օրը նշանակված է այն նկատումով,

թէ իբր հայկական գրերի գիւտը կատարվել է այդ օրը, ինչպէս ենթադրութիւն են յայտնել ոմանք, պէտք է ասել, որ շատ խախուտ մի հիմք է, որովհետեւ մենք գիտենք, որ նոյն իսկ 412 թւականը գեռ չէ ընդունված բանասէրների կողմից իբրև հաստատ թւական հայոց գրերի գիւտի: Բանասէր Գալուստ Միաբանը, որ մի ընդարձակ ուսումնասիրութիւն գրեց այդ մասին «Արարատ» ամսագրի մէջ, չէ կարողանում վերջնական կերպով ընդունել այդ թւականը: Նոյնը և պրօֆեսոր Մարրը, որ նոյնպէս շատ ենթադրական է գտնում 412 թւականը:

Սակայն այդ ամենը չէ արգելում տօնել գրերի գիւտի 1500-ամեակը, քանի որ պէտք է տօնվի տպագրութեան 400-ամեակը: Եւ որոշելով տօնել, ի հարկէ, յարմարագոյն օրը հոկտ. 13-ն է, Թարգմանչաց յիշատակութեան օրը, իսկ յարմարագոյն վայրը՝ էջմիածինը, որովհետեւ վերջինս միայն կարող է մեր ներկայ պայմաններում համազգային տօն դարձնել այն, ինչ որ կարող էր միայն տեղական բնաւորութիւն կրել, եթէ տօնվէր նոյեմբերի 26-ին, Թիֆլիսում, մի մասնաւոր

յանձնաժողովի ձեռքով, որ գուրկ է հարկաւոր հեղինակութիւնից՝ տօնը համազգային դարձնելու, քանի որ նրա ընտրութեանը չէ մասնակցել նոյն իսկ հայ մամուլի ամբողջութիւնը:

Մենք արդէն հրաւէր կարդացինք մեր նախորդ յօդուածով հայ հասարակութեան և ազգային-եկեղեցական-կրթականը հաստատութիւններին արձագանք տալ էջմիածնի կոչին, պատրաստվել մասնակցելու հոկտ. 13-ին էջմիածնում կատարվելիք տօնախմբութեան: Եւ այսօր կարող ենք արձանագրել, որ մեր կոչը չը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»:

Թիւրքիայի ազգային շրջանները և հաստատութիւնները, անտարակոյս, մասնակցելու են էջմիածնի տօնին: Նոյնը անելու են, որքան մեզ է յայտնի, և մեր ազգային հաստատութիւններից շատերը:

Հայ մամուլից որոշել են մասնակցել էջմիածնի տօնին «Մշակը», «Արօրը» «Աղբիւր Տարապը», նրանց կը հետևեն անշուշտ և ուրիշ թերթերի խմբագրութիւնները:

Ուրեմն վերջնականապէս լուծված համարելով հարցը, թէ երբ և որտեղ տօնել, մնում է քննել և էջմիածնի միւս առաջարկը՝ յաւերժացնել տօնը մի մեծ ակտով, այն է՝ դպրոցական ֆօնդի հիմնարկութեամբ:

Եղել են և կան ուրիշ առաջարկներ — հիմնել գրական ֆօնդ, հրատարակչական ֆօնդ և այլն:

Գրական ֆօնդ հիմնելը մենք ինքներս առաջարկեցինք դեռ անցեալ 1911 թ. սկզբին, երբ քննվում էր այն հարցը, թէ ինչո՞վ յաւերժացնել Կ. Հ. Բ. Ընկ. 30-ամեայ յօրելեանը: Բայց այն ժամանակ Ընկերութիւնը կանգ առաւ դպրոցական-ուսուցչական ֆօնդի վրա, և հայ ժողովուրդն ևս համակերպվելով՝ իր նուիրատուութիւններով հիմք դրեց այդ ֆօնդին: Այժմ էջմիածինը որոշել է հիմնել դպրոցական ֆօնդ:

Առանց ուրանալու գրական ֆօնդի կարևորութիւնը, մենք կարծում ենք, որ այնուամենայնիւ այժմ նախապատուութիւն պէտք է տալ դպրոցական ֆօնդին, որովհետև 1) մեր ժողովրդի համար ներկայումս ամենակենսական պահանջը դպրոցն է, ընդհանուր ուսումը, 2) արդէն դպրոցական ֆօնդի հիմքը դրված է Կ. Հ. Բ. Ընկերութեան ձեռքով, հետևաբար մի ձեռնարկութիւն դեռ չաւարտած, դեռ չիրականացրած՝ միտք չունի կիսատ թողնել և այժմ էլ այլ ձեռնարկութիւն սկսել: Իրագործենք դպրոցական ֆօնդը և ապա ձեռնարկենք գրական ֆօնդի կազման:

Հետևաբար, մենք յանձնարարում ենք հայ հասարակութեան և նուիրատուներին ոյժ տալ դպրոցական ֆօնդ կազմելու առաջարկին: Պէտք է միայն, որ էջմիածինը աշխատէ այդ ֆօնդը դնել ամուր և անսասան հիմունքի վրա: Ֆօնդը պէտք է կազմակերպվի սինօզին կից, պահվի սինօզի գանձարանում և հսկողութեան ներքոյ: Այդ ֆօնդին պէտք է աւելացվի և այն գումարը, որ ներկայումս հաւաքել է Կ. Հ. Բ. Ընկ. «դպրոցական-ուսուցչական ֆօնդ» անունով, որովհետև ազգային դպրոցական կամ ուսուցչական ֆօնդի կազմումը, մատակարարութիւնը թէ բարոյապէս և թէ իրաւագիտապէս պատկանում է միայն էջմիածնի իրաւասութեանը, որ, տիրող օրէնքների գօրութեամբ, համարվում է միայն իրաւատէրը, պահպանիչը և հսկողը մեր ազգային-ծխական-թեմական և հոգևոր դպրոցների:

Ինչպէս մեզ յայտնի է, Ամենայն Հայոց Կաթողիկոսը արդէն միջնորդել է Կովկասի Փոխարքայի առաջ՝ թոյլատրել ժողովարարութիւն յօգուտ դպրոցական ֆօնդի: Յուսով ենք, կը տրվի խնդրված թոյլտուութիւնը:

Եւ հայ հասարակութեանն է մնում ոյժ և աջակցութիւն ընծայել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրին և հնարաւորութիւն տալ նրան իրագործել դպրոցական ֆօնդը, որ այնքան անհրաժեշտ է մեր ազգային և ժողովրդական կրթութեան համար:

«Մշակը» ուրախութեամբ կրնդունի յօժարակամ նուէրներ այդ նպատակով և կը հասցնէ ըստ պատկանելոյն:

Հ. Առաքելեան